

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Իրիւ թիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆԻՍԻԿ

Դրամոյնիւ տուիր

20 անդրիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՐ ՀՐԵՏԱՐԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՐ

Հ Ա Ս Ց Ե

Rédaction du journal

„Iravounek“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեն տրուիր

ՏԱՃԿԱՅԱՅ

ԳԱՂՁԱԿԱՆՆԵՐԸ

Պոլսէն Եւրոպական թերթերու քաջուած հեռագիրները կը ծանուցանեն թէ, Օրմանեան Պատրիարքի դիմումներուն վրայ, Բ. Գուրբ Ռուս և թուրք սահմանադրութեան վրայ համախմբուած Տաճկահայ գաղթականներու թուրքիա մուտքը արտօններ է. չենք կարող տակաւին գիտնալ թէ, այս լուրը որ աստիճանի ստույգ է, կամ թէ գործադրութեան մէջ որ աստիճանի իրական ըլլալու է. միայն թէ, եթէ Տաճկահայ գաղթականներու թուրքիա մուտքը նոյնիսկ կատարեալ անկեղծութեամբ արտօնուի ալ, ու անոնք իրենց պահանջած քաղաքը երթալու սղաւտութիւնը վայելին ալ, վերստին այս տխուր խնդրոյն կարգադրութիւնը չի վերջանար. ընդհակառակը, ամէն ժամանակէ աւելի անհրաժեշտութիւն կայ անոնց դրամական օժանդակութեան փութալու. վասն զի, Տաճկահայ գաղթականներէ շատեր կովկասի մէջ մինչեւ սահմանադրութեան մեկնելու համար տոմսակ գնելու կարողութենէն իսկ զուրկ էին. այնպէս որ, թիֆլիսի Մշակը բնդհանուր հանգանակութիւն մը բանալով, անոնց մէկ մասին տոմսակ ճարեց ու մինչեւ թրքական սահմանագլուխը անոնց ծախքը կարողացաւ հոգալ. բայց անկէ՞ անդին. այո, եթէ թրքական սահմանները իրենց առջեւ բացուին ալ, ինչպէս կանոնաւոր ճամբաներէ, ուղեւորական դիւրին փոխադրութիւններէ զրկուած այդպիսի երկրի մը մէջ անոնք պիտի կոթողանան, ամենաւատնայայտ մէջադէմը՝ իրենց բնակավայրերը ուղեւորել. գաղթականներու վիճակին վրայ օրագրութիւն մը, զոր Մշակ հրատարակեց, ցոյց կուտար արդէն թէ՛ ուղեւորելու չքաւոր պայմանները այդ գոթախտ արարածներու շարքերուն մէջ օրական 20—25 անձի կոտորած կընէին. այնպէս որ Մշակի խնամակալ Թանձնախումբը որոշեց անմիջապէս բաւականաչափ ղեղերու միջոցով մէկ քանի բժիշկներ

գաղթականներու յառաջնադասութեան ուղեկից ընել. Բարեմն, ինքնին կը տեսնուի թէ այս գոթախտներու դէպի Հայաստան տաժանելի վերադարձը չպատահուի. գերադրապէս հայրենասիրական գործը տակաւին իր վերջաւորութեամբ չէ յանգած. Անոնք նպատակ ունին իրենց պէտք ունին, նախ՝ որպէս զի կարենան իրենց երկիրները երթալու համար անհրաժեշտ ծախքերնին հոգալ. յետոյ, իրենց երկիրները եթէ նոյնիսկ հասնին ալ՝ բան մը որ տակաւին պարզ ենթադրութիւն մըն է՝ կարենան, մինչեւ իրենց զբաղումին, պարագայունքին ձեռնարկեն ու քիւրտներու կամ թուրքերու կողմէ իրենց բացակայութեանը միջոցին գրաւուած գոթքերնին, կալուածքնին, տուններնին ետ առնելու ուղիւստին (որը այս խնդրոյ լուծումին ամենէն դժուարին կողմն է) կարենան ատեն մը անօթութենէ չը մոռնելու չափ հաց գտնել. Ուրախ ենք ըսելու թէ այս գոթախտներուն նպատաստելու գործը վառնալի մէջ կը հանդպի միայն համակողմնորդ, որոնք այս բարեսիրական ձեռնարկին յաջողութեանը սիրոյն, իրենց կարողութեան չափով մասնակցելէ զատ, ձեռքերնին եկած «բռնակատն» ալ չեն խռատիր. այդպէս ալ արդէն կը պահանջուէր խնդրոյ մը նկատմամբ ուր անհատական կամ կուսակցական խնդիրներու մուտքը բացորոշապէս գոյութեան իրաւունքէ զուրկ է. Տ. ԷԼՄԱՍՅԱՆ

ՊԱՐՍԻՑ ԾԱՅԻՆ ՄԷԿ ՃԱՌԸ

Մեր նախորդ թիւերէ մէկուն մէջ պատահելութիւնը ունեցանք Պարսկաստանի մեր ազգակիցներուն ազգային վերածնութեանը ու կրթական բարեկարգութեանը վերաբերութեամբ մտնրամտան ու սուսնասիրութիւն տրուող լրագրագրու վերջերս, Բարիզ իր այցելութեանը միջոցին, Պարսից վեհա-

փառ Շահը, որուն Հայերու նկատմամբ բարձրօրէն բարեացակամ տրամադրութեանցը վրայ խօսք էինք արդէն, իր մօտ հաւաքելով պարսկական ծառայութեան մէջ գտնուող բոլոր Հայերը, վիէննայի ղեկավար Նարիման-Խանը, Հռոմի ղեկավար իշխան Մելքում-Խանը, Հոնոնի Պարսից գինուորական գործակալ Արշակ-Խանը ուսումնարանի քարտուղար Միրզա-Յէյրուզէն Մելքում-Խանը, Շահի թարգման Յովհաննէս Խան Բէլէկեանը, անոնց հանդիսաւորապէս հետեւեալ խօսքերն ուղղած է. Պարոններ, Տարակոյս չունիմ թէ վերջին տարիներու մէջ ինձ կրօնակից պետութեան մը սահմաններուն մէջ կատարուած աղետալի անցքերը ծանր կերպով ձեր սրտերուն վրայ ազդած ըլլալու են. Ձեր ազգակիցներէն և հաւատակիցներէն սուրբ հատուած մը կոտորուեցաւ, փնայաւ, որը ամենեւին մասնակից չէր եղած մի բռն անմիտ մարդոց պատճառած անկարգութեանցը և ոճրագործութեանցը. Այդ բանը դէմ էր Ալլահի օրէնքին, որը Մարգարէին միջնորդութեամբ կը հրամայէ չնեղացնել արգար, աշխու և խաղաղաւոր մարդերը, ինչ հաւատք ալ որ դաւանելու ըլլան, ալ անօրէններու կամայականութեանց և բռնութեանց դէմ զանոնք պահպանել, իբրեւ Ալլահի հիւրերը. Շատ դարեր ձեր նախորդները իրանին հպարտեալ եղել են, ու իրանի վեհապետներն ալ սրբութեամբ կատարել են Ալլահի պատուէրն ինչպէս դէպի Հայերը, այնպէս և դէպի ուրիշ ազգութեանց հանդէպ. Բայց, Հայերը, ինչպէս ձեզի ալ յայտնի լինելու է, ուրիշ ժողովուրդներու մէջ առանձին դիրքի և նախապատուութեան արժանացել են. Ու այս բանը ձեզի ալ հասկնալի լինելու է. վասն զի որչափ որ Պարսիկներն ու Հայերը հաւատքով իրարմէ բաժնուած են միշտ, ս.ս. կայն անոնք միշտ արիւնով ու արիական ծագումով իրարու կապուած մնացած են. Այս ցեղակցութեամբ կը բացատրուի գրեթէ ա-

մէն մէկ պարսկի գործածած խօսքը՝ «տին-այրը գարտաշ» (տարբեր հաւատքի եղբայր). Այս խօսքը Հայերու մասին միայն եր գործածուի, իրաւ է, Արաբները մեզի Ալլահի օրէնքը տուել են, բայց Արաբներու և Պարսիկներու միջեւ լեզուի և ծագումի տեսակետով միթէ կա՞յ այն կապակցութիւնը, զոր Հայերու հետ ունինք. Ու սա բանին վրայ ալ ձեր ուշադրութիւնը մասնաւորապէս կը հրաւիրեմ որ, զուր երբէք մի կարծէք, մի կասկածիք որ արհեստական միջոցները (այսինքն Սուլթան Ապա-տիւլ Համիտի համիսլամութեան քաղաքականութիւնը) կարող են Հայերու, ձեզի նկատմամբ զգացումներս խախտել և թշնամութեան սերմը ցանել իմ ուղղափառ և քրիստոնեայ հպատակներու միջեւ. ստափիլուլլահ (ամենեւին). Դարերէ ի վեր դուք հաւատարմութեամբ և ազնուութեամբ ծառայել էք իմ պապերուս գահուն և մինչեւ հիմա ալ կը շարունակէք ծառայել. Ես, իմ մասիս, այս բանէ շատ գոհ մնացած եմ. ձեր ընդունակութիւնները բարձրօրէն կը գնահատեմ և կը դրուատեմ իմ գահուն և ժողովուրդիս ձեր մատուցած ծառայութիւնները. իմ սիրելի Սատրապս, Աթարէք-Աղամը ծագումով ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայ. Այսպէս ուրեմն, ձեր մտքին մէջէն ու ես կասկածի նշողը թող անհետի, ու բնաւ մի մտածէք թէ ձեր, քրիստոնեաներու և իմ միսիսլաման հպատակներու միջեւ խտրութիւն գնելու երբէք կարող եմ. Թող Ալլահն ձեզի օգնական ըլլայ, որպէս զի իմ գահուն և իրանի բարօրութեանը հռանդուն կերպով ծառայէք, և թող ան ձեզ հետ ըլլայ. Ս. Չ. Գ.

Տոմարակալութեան ու Ֆրանսերէն և Անգլիերէն լեզուներու հմուտ անձ մը Պուլկարիոյ կամ Ռուսմանիոյ մէջ վաճառատան մը մէջ պաշտօն կը փընտրուէ. Դիմել խմբագրութեանս:

ՆԱՄԱԿ ՍՕՅԻԱՅԷ

Ֆիլիպի. — Այս քաղաքի հայ գաղթականութիւնը՝ որ աղմկալից տիտղոսին արժանացած էր երկար տարիներէ ի վեր կարողացած անընդհատ ազգային կռիւներով, առաջժամ տարիներէ ի վեր խաղաղ վիճակի մը մէջ է։ Ֆիլիպի մէջ երեք հայ վարժարաններ կան. առաջինը եւս փակուած էին քանի մը ամիսներէ ի վեր համաճարակի մը պատճառաւ։ Բայց անցեալ շաբթու վերաբացուեցան. բացի մանկարաններէն, Այդ երեք կրթական հաստատութիւննց մէջ, աւելորդ է ըսել թէ, առաջին տէ. զը կը բռնէ ազգային վարժարանը թէ աշակերտաց թիւին և թէ դասատուական խմբին տեսակէ. տո՛վ. 8000 ֆր. չափ պիտոճէ մը ունի. Երկրորդ տեղը կը գրաւէ Զօրեանցի վարժարանը, որ այս տարի նախորդ տարուան չափ ալ աշակերտ չունի կըսուի և ուսուցչական խումբն ալ անկատար է գէթ առայժմ. Երրորդ՝ կուգայ Պատ. Երաւունքի մասնաւոր վարժարանը, ուր հազիւ 20—25 երկսեռ աշակերտներ կուսանին. այս հաստատութիւնը բազմալեզու. եան վարժարան մը ըլլալ կը լաւ անի. հոն հինգ լեզուներ կան. Հայերէն, Պոլկարերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն և Գերմաներէն, պարտաւորիչ կերպով կը դասաւսուցանեն. իսկ գիտութեանց մէջ Մարյոսի աւետարանը մեծ տեղ կը բռնէ. Աւելորդ է ըսել թէ, աշակերտները մեծաւ մասամբ բողոքական ծնողներու զաւակներ են։

Գ. ԲԱՋԱՐՃԸԳ. — Այս քաղաքի 25—30 տունէ բաղկացեալ տեղացի և Ատրիանուպոլսիցի ազգայնոց մէջ անհամբաւ թիւեր տասնեակ տարիներէ ի վեր արմատացած ըլլալով, վէճերը երբեք չեն պակսիր, և երբեմն սոսկ կալի համեմատութիւններ կուսեն, ինչպէս շուրջ երեք տարի առաջ մի ինչ Գէորգ վարժապետի անհեռատեսութեան հետեւանօք, զուտ եկեղեցական խնդրի մը համար, կառավարութեան միջամտութիւնը հրաւիրուած էր, որոց մասին իր ժամանակին իրաւունք բուն կերպով բողոքեց և այդ ալմուղակ սխալը գործողները գահաժիծուծէ ետ կեցուց։

Ճիշդ վէճերուն հետեւանօք անցեալ տարի թ. Բազարճըգի ափ մը ազգայինները երկու վարժարան բացած էին զատ զատ կուսակցութեան պատկանող. ուժերու բաժանմամբ բացուած այդ վարժարաններուն վիճակին մասին դրիւ աւելորդ է, երբ նկատենք թէ արդէն տեղւոյն ազգայնոց ամբողջին ուժը միասնելով իսկ փոքրիկ նախակրթարան մը մատակարարելու անբաւական է։ Բայց այսօր ուրախ ենք ըսելու թէ վերջապէս

քանի մը շարժութիւն ի վեր եկեղեցւոյ բակին մէջ գտնուող Ազգ. վարժարանը վերաբացուած է և իրտասարդ վարժապետի մը հսկողութեան տակ. իսկ նախորդ տարուան վարժապետները արդէն հեռացած էին քաղաքէն. փափաքելի է որ գոնէ այս տարի թ. Բազարճըգից զգուշանան իրենց ետերուն գահի ապագայ սերունդին դաստիարակութեան նուիրական գործը և իրենց կռիւները հեռու պահեն վարժարանէն։

Գ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՄԼԱՅԷՆ

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԸ

Ինչպէս ուրիշ ժողովուրդներ, հայ ժողովուրդն ալ ունեցած է զիջական խել մը յոռի յատկութիւններ, որոնց մնացորդները դեռ եւս ժառանգաբար գոյութիւն ունին նոյնիսկ արդի ինտելիգենտ հայ երիտասարդութեան մէջ։

Մենք՝ շատ ու քիչ, ժառանգած ենք մեր նախնաց ինչպէս լաւ յատկութիւնները, նոյնպէս նաեւ գէշ հատկութիւնները. Մենք շատ կը սիրենք սնափառութիւնը, և աւելի կ'սիրենք օտարին ծառայել՝ քան թէ մենք մեզի։ Մենք՝ Հայերս օտարի մը արտասանած փաղաքական խօսքերու ազդեցութեան տակ, ամէն ինչ կը մոռնանք, և ամենաոչինչ գնով կը թողունք որ մեր մտքի և ձեռքի ճարտարութեան արդիւնքն ուրիշները վախեն. իսկ մենք կը գոհանանք կամ կը մխիթարուինք քանի մը ուռուցիկ եւ վերացական խօսքերով։

Նոյնպէս մեր յոռի յատկութիւններէն մէկն ալ այն է, որ մենք զբոսարար կը զանազանենք գնահատելին քննադատելին. այս պատճառաւ ալ շատ անգամ բողոքովին ձրի ներքողներ կը չափենք այս կամ այն անհատի մասին, կամ առանց խղճահարուելու անխրաւ յարձակումներ կրնենք իրաւաւ ազդիւ և հայրենիքին օգտակար անձանց վրայ։ Մեր մէջ անաչառ քննադատներ շատ քիչ են, այն պարզ պատճառով որ իրարագովական տխրաւոր արմատ ձգած է մեր մէջ եւ անաչառ քննադատները եւթարկուած են անվերջ հալածանքներով։ Միւս կողմէն այն գրչակները, որոնք կեղծել եւ խեղաթիւրել գիտեն, այդպիսիներն ամեն տեղ յարգանք ու երախտիք կը գտնեն, բայց աւելի լաւ է ուղղամիտ ըլլալ և ճշմարտութիւնն հրապարակելով հալածուիլ, քան ինչ հանրութեան շահիւրէն, քան թէ սխալ տեղեկութիւններ տալով հասարակութեան մասնաւորի մը աչքին լաւ մարդ երեւիլ։

Անցեալ օր պատահութիւն ունեցայ Արեւելի մէջ կարգաւ «Շումլայէն», գրուած թղթակցութիւն մը։ Պ. յողուածագիրը քանի մը թուոցիկ նկատողութիւններ ընելէ յետոյ տեղւոյն հայ գաղութի հասարակական գործերու մասին, փութացած էր ուրախացուցիչ լուր մը տալ Արեւելի Պատ. Ընթերցողներուն, մէջ բերելով Շումլայի մէջ կապերտագործ Քերովի Էֆ. Սէօյիւտեանի անօրէնութեան տակ պուլկար կառավարութեան բացած «գորգագործութեան վարժարանը»։

Պ. Կոռնակ—այս է յողուածագիրն ա-

նունը—կուրախանայ, որ «չնորհիւ Սէօյիւտեան Էֆէնտի» մեր հայ օրիորդները փոխանակ դերձակութեամբ, հազիւ հազ, օրապահիկին ճարելու, Շումլայի մէջ բացուած կապերտագործութեան վարժարանը յաճախելով եւ այնտեղ կապերտագործութիւն սովորելով ապագայ մը կրնան ունենայ։

Արդարեւ ո՞վ չէր ուրախանար, եթէ միայն այդպէս ըլլար. բայց խնդիրն այն է որ, հակառակ Արեւելի թղթակցին յայտարարութեան Շումլայի մէջ բացուած կապերտագործութեան վարժարանէն մեկն ոչ մի չափ չունիք, և չնայած որ այդ արհեստական յաջողութիւնը ձեռք բերողը, կամ հակառակ այն հանգամանքին, որ այդ գործը հայու մը յանձնուած է, մեր ազգի շինքը սակայն, դոնէ առայժմ, զրկուած են անկէ օգուտիլ. որովհետեւ կառավարութիւնը միայն պուլկարի հինքը կընդունի վարժարան, և Սէօյիւտեան Էֆէնտի միանգամ պայմանաւորուած, դեր մը չկրնար խաղալ, և արդէն կարելի ալ չէ խաղալ, ընդունելութեան պայմանները փոխել, կամ կառավարութիւնը իր դիտաւորութենէն չեղեցնել։ Քերովի Էֆէնտի թերեւս յաջողի շատ շատ, մէկ կամ երկու հայ ազգիկներ ընդունել տալ—այն ալ եթէ ուզէ, առանց խտրութիւն դնելու իրենց ներկայացող հայ ազգիկներէն որ եւ է մէկը ընդունիլ վարժարանին մէջ—ասոր համար ալ կարծեմ չարժեք այս պիսի հրապարակային ներքողներ կարգաւ, այնպիսի մարդոց համար, որոնք մեր հասարակական զարգացման եւ յառաջդիմութեան լեզուակի օգուտ մը չբերելէ զատ, մեր մէջ արդէն գոյութիւն ունեցող օտարի ծառայելու հակումը աւելի եւս կը զարգացնեն և կընդհանրացնեն, իրենց անխորհուրդ եւ անհեռատես պայմանագրութիւններով։

Ճիշդ չէ կարծեմ միայն իր անհատական շահերով առաջնորդուող անձի մը պատուը չքանչանքներ բնծայել, լոկ այս թող զգացուածով, որովհետեւ անիկա հայ մըն է։ Դրական մարդ ըլլանք, որովհետեւ զրական աշխարհի մէջ կապրինք։

Կը հասցնամ քաջայրերէ Եգիպտակ մը, որ իր անդրանիկ երկասիրութիւնով, կամ որ եւ է մի նոր դիւտով, կուգայ ընդհանուր մարդկութեան ծառայութիւն մը մատուցանել եւ կը ձգտի գիտական տաճարին մէջ տեղ մը գրաւել։ Կարծէ ներքողներ կարգաւ, պատիւ կը բերէ ըստը գործածել, իր տեսակին մէջ եղական եղող, մի որոշ հուշակ հանող գիտականի կամ արհեստագործի մասին։ Կարծէ ուրախանալ հրճուիլ, այն պիսի գործի մը համար, ուրկէ առանց խտրութեան զրականապէս մեկնելու օգուտ մը կը փաղեմ։

Քերովի Էֆէնտի Սէօյիւտեան կրնայ արհեստագործ եւ խղճամիտ ուսուցիչ եղած ըլլալ, բայց քանի որ իր «մտքի և ձեռքի յաջողութիւնն», այսպէս կամ այնպէս, այսօր միայն պուլկարը կամ պուլկարուհին կ'օգտուի, քանի որ մեր հայ ազգիկները չոր հաց մը ճարելու համար դատապարտուած են զեռեւս ասեղներու ծակէն անցնել—Պ. Կոռնակ կրնայ այս պարագան ստուգել, և հաւատացած ենք որ անիկա շատ պիտի տխրի ցարդ իրականութեան առջեւ—մենք հարկադրուած ենք վերջացնել մեր խօսքը անմահ Գամառ—Քաթրիպայի հետեւալ դիտողութիւնով, որ շատ յարմար է պարագային, և անհրաժեշտ է երբեմն շնչալ մեր հայ գիտնականներու եւ արհեստագործներու ականջին։

«Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան, Թըքէլ ենք քու ալ ձեռքիդ ալ վրան»։ Գաղթական Շումլայ, 9 Նոյեմբեր 1902

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Չ.

Զօրեան (Ռոստոմ) քննիչ

(Շար. 81րդ քիւնէ)

Ռոստոմի ժամ մը որոշեց Տ. Մ. ի խօսքերը լսելու և սօքիւ. մանկերը տեսնելու. Նախապէս Ռոստոմին հասկցուցած էր վարդօն որ Տ. Մ. իր դէմ պիտի բողոքէ ու այդ պատճառաւ Ռոստոմ ալ իր որոշումն չը յաջգից։

Վառնայէն մեկնեցաւ Ռոստոմ. իր տեղեկագիրը պիտոյին գրկած էր. Պիւսոն ինծի կ'ծու նամակ մը գրեց. պէ. առ ի նամակը կը վեր. շնորհ ստալէս։ «Ապագան պիտի պարզէ թէ որո՞նք են անկեղծ և ճշմարիտ հայրենասէրները»։

Պիւսոյի այդ նամակը մեր վրայ շատ պէշ ապուրդութիւն թողուց, արեւելս որ շ. քեցի երկտողով մը իսկ պիտի սխալեն, Ռոստոմի կը մտածէի և աչքի առաջ ունէի պիւսոյի նախկին նամակները ուրոյցով շնորհակալութիւն կը յայտնէր և Ռոստոմին աջակից ըլլալս կը խնդրէր. աւելի ցաւալին ինձ համար այն էր թէ՛ անկեղծ և ճշմարիտ հայրենասէր մը ըլլալու համար պէտք է եղեր որ վարդօն խաչագողութիւնը և Տիկնանց մասնաճիւղի խնդիրը երեւոյն չը հանէի։ Այս քիւնէի զը թող դատէ ու ինքնիրեն հօրցնէ թէ Յանցանքն որո՞նք է։

Արդէն Տիկնանց մասնաճիւղի խնդիրը շատ պարզ էր և քաջագողները մերկապարանց մէջ տեղն էին. Պիւսոյի այդ նամակը ինձ ցաւ պատճառեց և թերեւս պիւսոն իրաւունք ունէր (") ինծի աջակէս գրիւն քանի որ 28 սընտուկի խաչագողութեան գաղտնիքն երեւան հանելու կարող չեղայ։

Վառնայ հաստն մեր նախկին ընկերներէն Պ. Ալլոտ և ծանօթ. ներէն Պ. Կարէն. Այդ պարունները կը հետաքրքրուէին 28 սընտուկի և Տիկնանց մասնախումբի խնդիրներով. մենք պէտք էր զած տեղեկութիւնները տուինք. անուղղակի կերպով փափաքեցան մեզ վարդօնի հետ հաշտեցնել, բայց երբ տեսան որ այդ մարդուկն ալ եւս մեզի համար քաջալապէս մեռած կ'մտնէ մըն է, բոլոր տեսար կութիւն մը իսկ չըրին։ Առաջտըկեցին սօքիւմանները տալ. այդ

այ մերժեցինք, գիտնալով որ վարդաօն էր գլխաւորը :

Ֆիլիպէի մէջ Դ. Նշակցութեան ընդհանուր ժողովը պիտի գումարուէր . Աշոտ և Կարէն արդէն այդ ժողովին ներկայ պիտի գտնուէին : Պ. . . Էն պատգամաւոր եկաւ Ս. տեղւոյն գտնուէի կարեւոր անդամներէն մին : Ս. այդ գիշերը հիւր եղաւ մեր բարեկամներէ Ա. ի տունը . հոն ներկայ էին մասնախումբի անդամներէն քանինները Աշոտ և Կարէն : Ս. շատ աշխատեցաւ Տիկնանց մասնախումբը հաշտեցնել վարդաօնի հետ , բայց մասնախումբը միայն ինկած վարդաօնին բացօթեական պատիժը պահանջեց . այսինքն արտաքինապէս ըլլալը Դրոշակի մէջ հրատարակել :

Ֆիլիպէի մէջ ընդհանուր ժողովը սկսած էր արդէն . ինկած մարդուկը՝ լաւ միջոց մը խորհած էր . մէկը զրկել Ֆիլիպէի բարեխօսէն անձամբ որպէս զի վարդաօն ձայն ունենայ ընդհանուր ժողովոյ մէջ իբր պատգամաւոր . վարդաօնի նման մարդիկ ինչ աստիճանի բարեխօսողներ կրնան գտնուի . վարդաօն գտած էր այդ բարեխօսողը :

վարդաօնի համար աշխատողն էր մատնիչ Լիւն Սարգիսեան . այդ տղեկը չը նայելով որ իր հրապարակաւ «մատնիչ» մը ըլլալու խօստովանութեան սեւ մուրը իր ճերմակ ճակտին վրայ կը մնար , առանց ամաչելու Ֆիլիպէ գալիս բարեխօսելու : Չէ՞ որ առաջին կրթէ՝ «նման զնմանն սիրէ» : Բայց բարեխօստաբար մեր Ստանիշ Լիւն Սարգիսեան գլխիկոր վարդաօնի հետ Ֆիլիպէէն առանց մազի մը չափ արգիւնք մը յառաջ բերելու :

Ֆիլիպէի ընդհանուր ժողովոյ որոշումն երբ Լիւն Սարգիսեանի միջոցաւ մեր վարդաօնի կը հասնի ,

այն առեւ լաւ մը կը համոզուի որ , իրեն միակ միջոց կը մնայ խռով խառնադուրթեան տուարակին տակ մինչեւ ցմահ :

Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ (Շարունակելի)

ԻՐԱՆԻԱՆԻՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Պ. . . , վրանա . — Մեզի անձնօթ չէ թէ այդ տղերքը գրող «Գէշ» մականունեալը , արդէն այս էջերուն մէջ մէկ քանի անգամ խայտառակուած , իր անհատական ու քննադատական կեանքին մէջ անբարոյութեան ինչպիսի ճեւաղ մըն է : Մեզի «լուսնոտ» , «ցուադար» , «ապտալ» կանուանեն . փոյթ չէ . անարգանքը միակ բանն է որուն սպասելու էինք այս դասակարգի արարածներու կողմէ . միայն թէ այս յաւիտեանական «ապտալներն ու «ցուադարները չսրաչար կը սխալին եթէ մեզի ալ իրենց ապականած հոգիներէն , անբարոյացած նկարագիրներէն դատելով , կերեւակային մեր անձին ունէ վիրաւորանք հասցնել . իրենց այդ ողորմելի գալարումները մեր հասցէին ունէ նախատական մակդիր ուղղելու , մեզի համար ամենէն պերճախօս ապացոյց՝ է թէ , այս ապիրատները , որպէս զի այս աստիճանի ինքզինքին կորսնցնեն , իրաւ իրենց «ապականիչ» արարքներուն մէջ ինքզինքին ծանրապէս հարուածուած զգալու են :

Նմանապէս անցեալ տարի ունէինք Լիւն Սարգիսեան մը , հոգեով ու գէժքով հաւատարապէս տգեղ , հաւատարապէս զլուելի արարած մը , նորնպէս 'առժամայ փոխանորդը խմբագրի մը որ տա-

րին 12 ամիս ուղեւորութեանց իր ձեռնարկէ , որպէս զի մէկ քանի միամիտ հարուածներէ դրամ մուրայ , ու կարենայ 'առեւ մըն ալ քաշկռուիլ ժողովուրդին արդար արհամարհանքին դատապարտուած խոր «անբարոյական» թերթը , — այո՛ , անցեալ տարի ալ ունէինք Լիւն Սարգիսեան մը որ նոյն ստորնութեամբ մեզի կոնարգէր , երբ հրապարակաւ կը նշաւակէինք մեր քանի դրոշակեան աւագակներու արարքը . բայց յետոյ երեւան ելաւ նոյնիսկ այս ստոր արարածին հանդիսաւոր խոստովանութեամբ թէ , ողորմելի որ ամէն օր յեղափոխութեան անունով կը ջարդէր , մեզմէ՝ «հոկայեղափոխականներէն» ժողովուրդը կը զգուշացնէր , ինքը ՄԱՏԵԻՉ մըն է եղեր . իսկ մենք , միշտ խրամաւ տին վրայ , միշտ հաւատարիմ զի . նուորները կռուոյ մը զօր նուիրական կը դաւանինք , մեր համեստ գործունէութիւնը կը շարունակենք , ապագային վրայ միայն վստահ , առանց երբեք ազդուելու մեր հարուածներուն ենթակայ սինլքորներու պոռնուքներէն :

Թող ընթերցող հանրութիւնը դատէ ու որոշէ տարբերութիւնը որ կայ անոնց ու մեր մէջը : Մինչ մեր խմբագիրը յիշելանք մինչեւ Օտեսոս կաթարոսի , նոյն «անբարոյական» թերթի մէկ խմբագիրը , Մեզին կերպեան , փողոցի խոշոր տաճակ մը , աս ու անմատնիչ ամբաստանելէ , յեղափոխութիւն քարոզելէ հետք , օր մըն ալ Պոլիս կերթայ , ուր Սուլթանի կողմէ 8 ոսկիի ամսաթոշակով Ռէփի մէջ պաշտօնի կոչուելով , իր գրածներուն արժանաւոր վարձատրութիւնը կընդունի . յետոյ , կարգը եկաւ ուրիշ մատնիչի մը ,

Լիւն Սարգիսեանին , որը նոյնիսկ իրեններուն կողմէ լրագրական հրապարակէն արտաքսուեցաւ . բայց , համբերութիւն . չարքը դեռ չէ վերջացած . «յեղափոխութիւն» քարոզող այս անբարոյական մարդերու յայտնութիւնները դեռ տեւելու են . միայն թէ , այս ողորմելիները համոզուած մնան թող թէ իրենց հայհոյանքները , կամ Մեսրոպ վարժապետեանի նման «անասնացած ստահակներու» ձեռքով իրենց դաւերը մեզի խթան մը միայն կրնան ըլլալ մեր գործը աւելի յամառութեամբ յառաջ տանելու :

Տ. Է.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հրատարակուած է «քսաներորդ դարու հայ կանանց» օրգան ըլլալու ձգտող Արտեմիս ամսաթերթին 5—6րդ միացեալ թիւերը . Արտեմիսի տեւականութեան ու յառաջդիմութեան նկատմամբ կատարեալ յաջողութիւն մաղթելով հանդերձ , խորհուրդ պիտի տալինք Եգիպտոսի մեր շնորհալի պաշտօնակցուհիին որ հանդէսին մէջ հրատարակուած յօդուածներու քերականական կանոններուն , համաձայնական ճշտութեանցը , նախադասական կապերուն քիչ մը աւելի ուշադրութիւն նուիրուէր . գրուածք մը որքան ալ յաջող , որքան ալ գեղեցիկ ըլլայ , առանց գործածական տիրող լեզուին քերականութեանը հպատակելու , կազալու դատապարտուած կը մնայ :

— Կիրակի օր կէս օրէն ետքը Ազգ. վարժարանի սրահին մէջը գումարուեցաւ տեղւոյս Որբախնամ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(32)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՇԱՏԻՈՒ-ՎԵՏԻԿԵԻ ՎԵՐԻԸ

- Լաւ , չկարողացա՞ք խնդիրը քննելու :
- Խնդիրը քննեցի :
- Ինչ է եղեր :
- Մոկաց Շէյխը խումբ մը խաղաղներով հայ աղջիկ մը փախցունելու յաջողած է . բայց այդ կիրճին մէջ կտրիճ Հայերու հանդիպելով անձնատուր կըլլայ ու կը ստիպուի աղջիկը թողուի :
- Զիչդ չէ՞ տալիկ :
- Որո՞ւ կրնաս հասկցունել : Անցեալ օրը մեր քաղքին Ուսմա կոչուած հայ աղաներն անգամ չը հաւատացին այսպէս ըլլալուն :
- Հապա՞ :
- Անոնք պնդեցին թէ քանի մը աւագակներու գործն է եղեր : Այդ աւագակները պահուած են Արտաքսարանի քովերը : Բանտարկուած գեղացիներն են որ կը կերակրեն զանոնք :
- Հոգ չէ՞ . . . մենք գիտենք այդ խամբաներու

- բերանը : Ի հարկէ չունենը չեն հաջեր ա՛յն մարդերու վրայ , որոնց ձեռքէն ոսկոր մը կը բրցունեն : Թող՞ւնք այդ կէտը . հիմալ կը յայտնենք թէ՛ Հայրենեաց ու Ազգին շահերը կը պահանջեն Ձեր վեհափառութեան աջակցութիւնը :
- Պարթեւ հասակով կղերականը պատկառելի գլուխը վեր վերցուց ու խորին հետաքրքրութեամբ մը հարցուց .
- Ի՞նչ է այդ աջակցութիւնը :
- Կը փափաքենք որ գաղտնի կերպով պատուիրէք Վանքի մշակներուն միջի օգնելու , նկատել տուաւ Ներսէս Արծրունին :
- Ինչպէ՞ս . . . չեմ հասկնար , առարկեց Վեհափառը : Դուք ո՞ր կը մնաք որ մշակներու օգնութեանը կը կարօտիք :
- Մենք լեռներու մէջ կը մնանք . . .
- Լեռներու մէջ :
- Այո՛ :
- Տէր Աստուած . . . զո՞ւք էք «Հայկական խումբին» մարդիկը :
- Այո՛ , մենք ենք : Բայց ուսկի՞ց գիտէիք աւտիկա :
- Իմացած էի : Կը պատմին թէ խումբին գլուխը Ներսէս Արծրունի տնունով մարդ մը կը գտնուի , որուն քաջութիւնը սարսափ ազդած է քուրդերու մէջ :
- Ո՞վ է պատմողը , Վեհափա՛ռ :
- Ինչ գիտնամ . . . տեսնողներ կան եղեր զինքը : Դո՞ւք անոր խումբին չեք պատկանիր :
- Գրեթէ . . . կովմաց Ներսէս Արծրունին :
- Քանի որ Ներսէս Արծրունիի խումբին հեա

- յարաբերութիւն ունիք , կը յայտնեմ թէ պատրաստ եմ օգնելու : Ես հաւատացած եմ որ այդ մարդուն երեւումը մեծ ազդեցութիւն մըն է Հայերուս ու այսօր ճնշուած գիւղերը կենդանացած են անոր աւանով :
- Երախտագիտութիւնը կը յայտնէ Ձեր վեհափառութեան՝ Ներսէս Արծրունին , միմիջեց Աւագակապետը՝ խորին պատկառանքով մը անոր ձեռքը համբուրելէ ետքը :
- Աստուած պահէ՛ ձեզ . . . Թոթովեց Վեհափառը՝ ու համբուրեց Ներսէս Արծրունիի ճակատը : Բայց զո՞ւք այստեղ :
- Եկանք Ձեր վեհափառութեան կամքն առնելու , չնչոնց Ներսէս Արծրունին :
- Ո՛հ , ձեր մասին խօսած էր ինձի պարոն Մկրտիչ Աւետիսեան , ընդհատեց Վեհափառը : Չա . . . փաղանց ուրախ եղած էի որ այս կողմերը կը գրտնուիք , ուր քրդական խեղճութիւնը սահման չունի :
- Մեր պարտականութիւնն է , Վեհափա՛ռ , ներքին ուժ մը պատրաստել , գեղացիներու ձեռքը զէնք դնել ու զէնքը գործածելուն կերպն ալ սորվեցունել , եւ ասանկով գլուխ հանել ապագայ մեծ ծրագիրն , որուն կապուած է հայ ժողովրդեան Անկախութեան հարցը :

(Շարունակելի)

ընկերութեան ընդ. ժողովը. ժողովը նախկին Գործ. ժողովոյ հա. մարտառութիւնը լսելէ ետք, իր մէջէն չորս հոգիէ բաղկացած յանձնախումբ մը բնորոշ, որպէս զի հրաժարող Գործադիր ժողովոյ միամետ Գործադիր ժողովը հա. կակշռի ենթարկէ. Եւտոյ ընդուն. ներդ Գործ. ժողովոյ հրաժարա. կանը, ընդ. ժողովը ձեռնար. կեց նոր Գործ. ժողովոյ ընտրու. թեան. Նոր Գործ. ժողովոյ ան. դամ ընտրուեցան քուէներու ա. ռաւելութեամբ.

- Տ. Յ. Ճանկիւեան
- » Ստեփան Տէմիրճեան
- » Նիկողոս Պէլլիքեան
- » Գրիգոր Էքմէքեան
- » Սիրական Եղիկեան

— Կարգ մը խայտառակներ այնպէս մը ցոյց կուտան որ, իբր թէ մեր առջի շաբաթ օրուան թուով, վառնացիները վերադարձը բաւեր գործածած ըլլանք. մեր ընթերցողները յիշելու են թէ 2-3 տարի առաջ, մենք էինք որ մեզի այս ամբաստանութիւնը ընողնոյն այդ «Գէշ» երուն Պոլսոյ թերթն. ըուն մէջ տեղացիներու մասին ը. րած աննպատ հրատարակու. թեանցը դէմ բողոքեցինք. հետե. ւապէս պէտք չունինք տեղացի. ըու մասին մեր վարձուքին վրայ ուրիշներէ դաս առնել: Մենք մեր շաբաթ օրուան թիւին մէջ ուզե. րէինք, երգիծական ձեւերու տակ, իր անբարոյութեամբը ծանօթ տեղացի սը նշաւակել, որ ու է կերպով վառնացիներուն պատիւ չէ կարող բերել. հետաքրքրեցինք կրնան նաեւ գիտնալ թէ մեր խմբագիրներէն Տ. Էլմասեան ինքն իսկ տեղացի կնոջ մը զաւակը, վառնայի մէջ ծնած, վառնայի վարժարանը յա. ճախած անհատ մըն է:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՏԱԿԱՆԱՅ ԳԱՂՏԱԿԱՆՆԵՐՈՒ

Բ. Ցուցակ

|                       |        |
|-----------------------|--------|
| Ա. ցուցակի գումար     | 12 ֆր. |
| Յակոբ Սէֆերեան        | 1 »    |
| Պաղտատար Յովհաննէսեան | 1 »    |
| Դանիէլ Մալանան        | 1 »    |
| Գումար                | 15 »   |

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ  
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթամպուլտան թաւա պիտի. րիտիյինէ կէօրէ, Սուլթան Բուս սէֆերի Մ. Չինովիէզի հուզրը. նա գապու իտուպ՝ մուսաիլէյին քէնտիսինէ արգ էլլէտիյի ուզուն պիւ միւքիալէմէյի տիւնէմէյէ թէ. նէզիւ իթմիշ: Մէզբիւր միւ. քեալէմէ խասաթէն Մաքթեմիա՝

վէ ախիքէն օրատա ճարի օլան իխթիլաֆ հագգընտա օլուպ, Մ. Չինովիէզի Մ. Օնասթր վէ Գոսովա վիլայէթէրի վալիէրինին ազ. օ. լընմար վէ պազը մէսնէտի գա. պիթլէրիէ մի. ճ. իմ աքբըլէրին ճէ գալանմարնր թալէպ իթմիշ. վէ երէն եալընրգ ապանիտարտան միւթէշէքբիւ գապթիյէ էֆրատը իշինտէ խրիթիյանլար անխի պուլընմար՝ վէ չիֆթիլէ սահիպ. լէրի թար. ֆէնտան էօշը սէպէ պիլլէ ֆազիւր էհալիլէրին թազ. եիք օլընմարընը մէնն օլընմա. սիլլէ, տիկէր էհալիլին հուզըր վէ բահաթը ումու միյեսինի մուծիպ օլաճագ պազը թէքեալիֆտէ պու. լընտրղընտան թաւն կազէթաթը տէյօրքի «էլէր պու թէքիֆիլէր մէվգրի իճրալէ ցօնըլսա օլ վա. զըթ մաքթեմիա իխթիլալընտան իսթիֆատէ իթմէք իսթէլէն տէօվ լէթլէրին իսթիւլէրի Գաթ օլը նաճագ տըրո:

— Կէլէն բազար էրթէսի կիւնի Բաճալան ալըրնի իպթիտաթը օլ. տըղընտան, Սուլթան ումու մէ. մուրլարա պիլէր ալըր թէվզի օլընմարնը պա իրատէ էմ. իթ. միշ իսէտէ տիկէր հէնիւ թէտիլէ օլընմարան ալըրգը օ հալտէ գալ. մագտա տըր: Պա սէպէպտէն նայի թիւրք սաքբըլէրի հէր կիթտիք լէրի երըլէրտէ էհալիի զսապ ի տուպ եաշամայս մէհպուր օլմագ. տա տըրլար: Պա նըզամազըլըզա պիւր չարէ տիւլիւնէլէն Պազը Ալիի պազըլարը կիպի Պազը խալի (պարապ դուռ) թէսմիյէ իթմէք տախի սէզա տըր:

— Լնտէքանտան Բոնմէն կա. զէթաթընը վէտիյի մալիւմաթա նազարէն բաթրիք էֆէնտիին Սուլթանա միւքէրէրէն իթմիշ օլտըրը թալէպիլէրինտէն, Բուսիա էրմէնի մէհաճըր գարտալլամըր. զըն վաթանլարըն. ապտէթի խու. սուսընտա Սուլթանըն միւսաստէ պուլարմասընը մա էլ մէմուռնիյէ օգուտըգ:

Չ Ի Ն

Բէքիտէ, Աւստրիալը պիւր Պէր սանէ ասքէրի գօլ կէնէրքէն, ի. թալիա ասքէրէրինտէն պիլիինն սօգագտա պիւր թազըրմ րէզալէթ իթտիքտէն սօնրա, թէսլիմ օլմա. մարը սէպէպիլլէ, իւլէրինէ աթէշ իտուպ էօլտիլմէսի սէպէպիլլէն իքի թարաֆ ասքէրէ ի պէլիինտէ պէլիլէ պիւր պարըրըրգը գուհուր իթմէքտէ իքէն կիւն հալ իլէ թա. րաֆէյն զապիթլէրի պու իշի մէնն իտէպիլմիշէր:

— Ինկիլթէրա հիւքիւմէթի Շան. կայըն թախիլի գըրընմարը՝ եանի պէլիլէ տէօվլէթլէր ասքէրէրին. նին տիշարը չըգմասը խուսըսըն. տաքի ումուրը միւրասէլէի չիմ տիքի հալ Բարըմանա պըրագմը իսէտէ, իլէրուտէ շէտիտ մուսմէ. լէլէրտէ պուլընաճազը մէմուլ օլ. մագտա տըր:

— Ճարօնիա բայի թախիլը օ. լան թօքիօ շէհրիտէ պուլընան թաւնըն մուխպիլիտէն ալընան մալիւմաթա կէօրէ, Ճարօնիա հիւքիւմէթի Շանկայտա պուլընան մուհաֆըզ ասքէրէրինի կէրի շէք. միշ իսէ տէ: Չին հիւքիւմէթիինէ շէօլլէճէ իթթար իթմիշ տիւր. «հէր նէ գատար շիմտի կէրի շէ. քիլիյօր իսէմտէ, էկէր տիկէր տէօվ էթլէրին պիւր զըրհըսընր պուրա. լարտա կէօրսէմ, օլ անտէ պէն տախի գուվէի ասքէրիլէմէ պու. րատա հազըր պուլընաճազըմ:

Ալմանիանըն Ռայիլըստակ մէճ. լիսինտէ Բօլօնիալը մէպուսար պիւր թազըրմ Բօլօնիալը կալէթաճըլար վէ թիւճճարլար հազգընտա զապ. թիլէնին նըզամ մուլտիյի օլա. րազ իճրա իթմէքտէ օլտըրը թազ. եիգաթ վէ տախի իտաքէի սիա. սիլլէ թաքաֆընտան տուշար օլ. տըզլարըր միւլքիւլաթլար հագգըն. տա նըզամաթ թալէպ իտուպ շէ. տիտէն շիքեայէթ իթմիշլէր: վէ Բօզէն շէհրիին պէլէտիլէ ինթի. խապընտա, Բօլօնիալըրա ալման. լարա թէֆէվիլէզ իտուպ՝ անլէ. րին ազալարնրն Յի եէրինէ Բօ. լօնիալըրալը ինթիլապ իթմէլէ միւվէֆֆա օլմուշլար:

— Թաւնըն, Ալմէրիա մուխպի. րինտէն ալտըրըր մալիւմաթա նա. զարէն, կէլէն Դիկու. ալըն 15 տէ ամիրալ Սթաքէլպէրի քօմանտար թաշլընտա, 8 տալտ զըրհը. տան իպարէթ օլաճագ պիւր Բուս ֆիլօրը պահըր մուհիթը քէպիւր (խալ. ովկիանոս) սիյահաթը էա. նասընտա Ալմէրիայա օղրոտեճագ մըշ:

— Մարսիլիտան թաւն պիւ. տիլիտիլինէ կէօրէ, Պօէր ժէնէ. րալ Մօրիճ, րէֆագաթիտէ վան. Պալմէլէն նաճ Պօէր քօմանտան պուլընտըր հալտէ, Մարսիլիա. տան Մատակապարա կիտէն Ճէմ. նալ մուրօրիա րազիպ օլմըշ, մէրգուլ մէնէրալըն՝ Աֆրիգանըն ճէնուպիլտէ թարանպալըն գա. ր. շըսընտա պուլընուպ Ֆրանսայա ալիտ օլան մէզքիւր առայա կիթ. մէսիլտէն մագտա իսէ, քէնտի վաթանտալարը թարաֆընտան եազընէն իճրա օլընաճագ մէհա. ճրըրգտան նաշի անլէրին իսքեան իթմէլէրի իշիւն միւնասիպ պիւր եէր թախիս իթմէք իթմիշ:

— Բուսիա Չարըն հէմիլիլէսի վէ պէլիլէ Տիւք Ալէքսանդր Մի. խալիլօվիշին զէվէսի օլան պէ. օ ի. ք Տիւքէս Գալէիա Ալէքսան. տրօվա, Գըրմըն Այ թօտօր շէհ. րինտէ պիւր բուէն թէվիլտ իթմիշ օլուպ բուէնսին վէ վալիտէսինն սըհէթի պէր քէմալ օլտըրը եա. զըլմագտա տըր:

«ՎԱՋԳԻՆ. ԵՐԳԱՐԱՆ

600 երեսէ բաղկացած, 300էն ա. ւելի երգեր, նշանաւոր գործիչներու կենսագրութիւններ ու լուսանկարներ կը պարունակէ իր մէջ:

Գոյացած հասոյթը յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը:

Ամէն դասակարգին դիւրամատչելի ըլլալու համար որոշուած է ծախուիլ 5 ֆրանքի: Դիմել՝ 1—16

Յ. Կ. Ճանկիւեան  
(Պուլկարիա) Վառնա

ԱՐՄԵՆԻԱ. ԼԻՆՉԻ. — Հ. Յ. Բ. Լիւիշի, պատկերովը եւ ինքնակեն. սագրութեամբ: Գրեց Պ. Տօնապետ. եան: գինն ճանապարհածախսով 3 ֆրանք. գիմել աշխատասիրողին՝ 117 Կօսովիէն Քօս-Լոնսոն W 1—8

ՏՕԲ. ՆԻԲՕԼԻՆԱ Մ. Է. ՔՕՎԱՋԷՎԱ

Շէհրիլիտէ պու նամ իլէ միւսէմա պիւր մահր թապիպէ մէվճուտ օլուպ, կէրէք խարիճի վէ կէրէք տախիլ խասթարգալարնա պագմագտա տըր: Հէր կիւն, տէօրտիւնէի ուշաթա, ուլիգա Կօլօնիտէ քեալին 13 նօմէ. րօլը խսնէսիտէ հասթա գապուլ ի. իտիյօր: 5—5



Ի Լ Ա Ն

Էնուանըն եէնի վարօր գումարանա. սընըն վարօրարը հէր բազար էրթէսի կիւնէրի լիմանըրգա միւվալէթ ի. տուպ, սալը կիւնի պուրտան հարէ. քէթ իտիյօր: Սթանպուլա, Չանադ. Կալէյէ, Բիլէյայա, Բաղրասա վէ Կօրֆուլա օղրալարագ՝ Այ-Մարանտայա գատար կիտէյօր: Եօլըլար Բիլէյատա՝ Ալէքսանտրիա, Մարսիլիա վէ Ամն. րիկա իշիւն ապթարմա օլապիլիլէր:

Վարօրարըմըզն պէլիլէրիլէր: թէ. միլիլի վէ չաքուգըրը վէ եօլըլա. րըն րահաթըլը իշիւն կէօսթէրիլէն նէզաքէթ ճիւլլէյէ մալիւմ օլուպ թագտիւր օլընմագտա տըր: շիմտի ֆի. յաթլարըն էհվէնիլիլէտէ սայ վէ զայրէթ իթտիլիլիլէ կիպի շէհատէթը մէօթէպէրէ իլէ կէլէն ֆուգարալարա մուսլէնէթ իտէճէկիմիլի վատ վէ ի. ւան իտէրիլ:

Բաղալէթի միւլէթէրիլէրիլէ տախի ֆըրասթաւան իսթիֆատէ իտէրէք, պիլիլէ ուշաթըրգտա, իսկէլէտէ Մանչէսթըր սօգաղընտա 396 նօմէրօլը եազըլտանէմիլէ թէշիլի պուլուրա. ճազարընը իւմիտ իտէրիլ:

Մէզքիւր վարօր գումարանանըն ա. ճէնթի՝ Դ. ԼՈՒԼՈՒՏՕԲՈՒԼՕ

ՍՐԱՀ "ՍԱՆԴԻԱԼ"

Վալը գիշեր նասեճսա խմբին կող. մանէ պիտի ներկայացուի «Կարմիր գինեւան ոճիլը» թատերգութիւն 3 արար:

Ծիծաղաշարժ զաւելտ 2 արար:

Շարաթ գիշեր պիտի ներկայացուի, ՀԱՅԵՐԷՆ լեզուաւ «Վասպուրականի Հերոսները»:

Одговорникъ Н. Драгулевъ  
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна